

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի**

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**2010թ. մայիսի 23-ի ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների
կազմակերպման եւ անցկացման վերաբերյալ**

Ազգային ժողովի հարգարժան նախագահ
Հարգելի պատգամավորներ, գործընկերներ

Թույլտվեք ԼՂՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ձեր ուշադրությանը ներկայացնել ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի 2010 թվականի մայիսի 23-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաղորդագրությունը:

Քանի որ 2009 թվականի մայիսին փոփոխություն է կատարվել ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների համամասնական և մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցության մեջ, համաձայն որի՝ 17 պատգամավորական մանդատ հատկացվել է համամասնական, իսկ 16-ը՝ մեծամասնական ընտրակարգին, ուստի կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ձգտելով նաև, որ յուրաքանչյուր վարչատարածքային միավոր՝ շրջանի իմաստով, ներկայացված լինի երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնում՝ Ազգային ժողովում, դեռևս 2009 թվականի հուլիսին կազմավորեց Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորական տեղերի թվին հավասար 16 ընտրատարածքներ:

ԼՂՀ ընտրական օրենսգրքի դրույթների համաձայն՝ 2010 թվականից տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են ԼՂՀ ընտրական իրավունք ունեցող միայն այն քաղաքացիները, որոնք կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ:

Ի կատարումն ընտրական օրենսգրքի այս պահանջների՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2010 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Ստեփանակերտում և շրջաններում կազմակերպեց այդպիսի դասընթացներ, շրջաններում ըստ ենթաշրջանների, անհրաժեշտության դեպքում՝ մի քանի հոսքերով: Դասընթացների արդյունքներով տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընդգրկելու համար պատրաստվեցին 2540 որակավորված մասնագետներ:

2010թ. թվականի փետրվարի 5-ին ԼՂՀ Նախագահի կողմից Ազգային ժողովի հերթական ընտրության օրը մայիսի 23-ը նշանակելուց և փետրվարի 12-ին ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքային պլանը և ժամանակացույցը հաստատելուց հետո կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեռնամուխ եղավ ընտրությունների կազմակերպման բազմաբնույթ միջոցառումների իրականացմանը:

Նախապատրաստական աշխատանքների կարևոր մաս էր կազմում Ազգային ժողովի ընտրությունների փաստաթղթային ապահովումը, այսինքն՝ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունման ապահովումը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակվել, հաստատվել, ԼՂՀ արդարադատության նախարարությունում համապատասխան պետական գրանցում ստացել և կատարողներին՝ ընտրական հանձնաժողովներին, համայնքներին, շրջվարչակազմներին, նախարարություններին և շահագրգիռ ծառայություններին են առաքվել ընտրությունների համար անհրաժեշտ բոլոր հրահանգները, կարգերը, ձևաթղթերը,

պարզաբանումները, մեկնաբանությունները, արձանագրությունների ձևերը և այլ թվով 60-ից ավելի փաստաթղթեր:

Հրատարակվել և ընտրական հանձնաժողովներին, կուսակցությունների ու թեկնածուների շտաբներին է տրամադրվել «Ուղեցույցը», որում զետեղված են ընտրությունների անցկացման մեթոդական ցուցումները, հրահանգները և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարևորագույն որոշումները:

Հրատարակվել և ընտրական գործընթացի կազմակերպիչներին, դիտորդներին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին է տրամադրվել ԼՂՀ ընտրական օրենսգիրքը՝ այս տարի մարտին կատարված փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում իրականացվել են համամասնական ընտրակարգով կուսակցությունների ընտրական ցուցակների, իսկ մեծամասնական ընտրակարգով՝ թեկնածուների առաջադրման և գրանցման աշխատանքները: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցվեցին համամասնական ընտրակարգով առաջադրված բոլոր 4 կուսակցությունների՝ «Ազատ հայրենիք», Արցախի ժողովրդավարական, ԼՂ կոմունիստական և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունների ընտրական ցուցակները, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից՝ մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորության 44 թեկնածուներ, որոնցից 4-ը, ինքնաբացարկի դիմում ներկայացնելով, հետագայում հանեցին իրենց թեկնածությունները:

Քվեարկությունը կազմակերպելու համար մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած անձանցից կազմավորվեցին 272 տեղամասային ընտրական հանձնաժողովներ հանրապետության տարածքում, իսկ 1 հանձնաժողով էլ՝ ք. Երևանում, Հայաստանի Հանրապետությունում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում:

Ինչպես հայտնի է, համաձայն ընտրական օրենսգրքի, 2007 թվականից ընտրական ցուցակները կազմում և վարում է ԼՂՀ ոստիկանությունը: Ազգային ժողովի ընտրություններից մի քանի ամիս առաջ ԼՂՀ ոստիկանության ղեկավարությունը ընտրական ցուցակների կազմման գործում համակարգչային մշակման նոր ծրագիր մտցրեց, դրա հիման վրա կազմվեցին ու սահմանված ժամկետում՝ ապրիլի 13-ին համընդհանուր ծանոթացման համար ընտրական տեղամասերում փակցվեցին ընտրական ցուցակները, որոնց ճշգրտման աշխատանքները շարունակվեցին ավելի քան երկու ամիս:

Սակայն տպագրված և ընտրություններից 2 օր առաջ տեղամասային կենտրոններում փակցված վերջնական ցուցակներում ընտրողների համարները, հատկապես Ստեփանակերտում, չէին համապատասխանում ընտրողներին արդեն բաժանված ծանուցագրերում նշված համարներին, իսկորոշ բազմաբնակարան շենքերի բնակիչների անուններ դուրս էին մնացել ընտրողների ցուցակներից: Սա որոշ դժվարություններ առաջացրեց տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքում, իսկ հարյուրավոր ընտրողներ, չգտնելով իրենց անունները ընտրական ցուցակներում, չմասնակցեցին քվեարկությանը: 690 ընտրողներ, որոնցից 482-ը Ստեփանակերտում, ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ այսինքն ոստիկանության տեղեկանքի կամ դատարանի վճռի հիման վրա վերականգնեցին իրենց ընտրական իրավունքը և մասնակցեցին քվեարկությանը:

Այս ամենի պատճառները պարզելու համար ԼՂՀ ոստիկանության ղեկավարությունը ծառայողական քննություն է նշանակել, որի արդյունքներով մեղավորները պատժվել են:

Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացի կազմակերպական – տեխնիկական ապահովման գործում կարևոր նշանակություն ունեցավ ԼՂՀ կառավարության 2010թ. մարտի 31-ի որոշումը՝ ընտրական հանձնաժողովներին աջակցության մասին, որի հանձնարականների կատարումը մեծապես նպաստեց ընտրությունները ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, կազմակերպված ու պատշաճ մակարդակով անցկացնելուն:

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում կարևոր փուլ հանդիսացավ նախընտրական քարոզչությունը, որին ընտրական օրենսգրքի համաձայն հատկացվել էր մեկ ամսից քիչ ավելի ժամանակ: Կենտրոնական ընտրական

հանձնաժողովը, ընտրական օրենսգրքի պահանջներից ելնելով, նախընտրական քարոզչություն անցկացնելու կարգը սահմանելու համար քննարկումներ է անցկացրել կուսակցությունների և թեկնածուների ներկայացուցիչների հետ, հաշվի է առել նրանց առաջարկությունները, քարոզչության գործում տեղական ինքնակառավարման և պետական մարմինների պարտականություններն անմիջականորեն հասցրել է համայնքների ղեկավարներին ու պետական պաշտոնյաներին: Կատարվել են նաև այլ կազմակերպական-բացատրական աշխատանքներ, որոնք, մեր կարծիքով, որոշ չափով նպաստել են նախընտրական քարոզչության պատասխանատուների կողմից գործը սահմանված կարգով կազմակերպելուն :

Կարելի է արձանագրել, որ նախընտրական քարոզչությունն ընդհանուր առմամբ ընթացել է հանգիստ, քաղաքակիրթ մթնոլորտում, ինչը, համընդհանուր կարծիքով, վերջին տարիներին Հանրապետության Նախագահի ջանքերով հանրապետությունում ստեղծված կայուն, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի, քաղաքական դաշտում ձևավորված հանդուրժողականության, համագործակցության, կառուցողական քննադատության գործելաճի արդյունքն է, որը և նկատելի ու գնահատելի են նաև միջազգային դիտորդները:

Պետք է նշել, որ կուսակցություններն իրենց նախընտրական քարոզչությունն իրականացնում էին սահմանված կարգին համապատասխան, քաղաքակիրթ մրցակցության պայմաններում հիմնականում իրենց ծրագրերի շուրջ քննարկումների միջոցով:

Որոշ լարվածություն կար մի քանի ընտրատարածքներում՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածուների, հատկապես ըստ բնակչության վայրի ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու ժամանակ, բայց, բարեբախտաբար, ձեռնարկված միջոցների շնորհիվ այդպիսի դեպքերը չհասցրին և չէին էլ կարող հասցնել բնակչության տարբեր հատվածների միջև լուրջ հակադրությունների:

Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում մեծ ուշադրություն հատկացվեց քվեարկության կազմակերպմանն ու անցկացմանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, ժամանակին սահմանեց մեծամասնական և համամասնական ընտրակարգերով պատգամավորների ընտրությունների քվեաթերթիկների ձևերը և շարադրանքները, դրանց նմուշներն առաքվեցին ընտրական հանձնաժողովներ և ընտրական տեղամասեր՝ ընտրողներին ծանոթացնելու համար: Վերահաստատվեց քվեաթերթիկներում ընտրողի կողմից միատեսակ նշագրումը՝ V(վեաձև) նշանը: Քվեաթերթիկների կեղծումը կամ կրկնօրինակումը բացառելու նպատակով կենտրոնական ընտրական հանձնաժողովը դրանք պատվիրեց և թողարկեց պաշտպանիչ ջրանիշով:

Ընտրական հանձնաժողովները, զանգվածային լրատվության միջոցները, ղեկավարվելով ընտրական օրենսգրքի պահանջներով, աշխատանքներ էին իրականացնում՝ ապահովելու Ազգային ժողովի ընտրությունների հրապարակայնությունը: Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերը, նրանց կարևորագույն որոշումները, բոլոր միջոցառումները և ընդհանուր առմամբ գործունեությունը լայնորեն լուսաբանվում էին հանրային հեռուստատեսությամբ ու ռադիոյով, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսությամբ և թերթերում, «Ազատ Արցախ» հանրապետական, քաղաքային ու շրջանային թերթերում: Կազմակերպվեցին կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի ունյուս անդամների բազմաթիվ հարցազրույցներ, մամուլի ասուլիսներ, ուղիղ ռադիոհեռուստատեսությամբ: Ընտրողների գիտությանը հասցնելու նպատակով մշակվեցին, հրատարակվեցին և բոլոր ընտրական տեղամասերը առաքվեցին ու ընտրական կենտրոններում տեղակայվեցին ընտրական օրենսգրքով նախատեսվող դիտողական նյութերը՝ ընտրական թեմատիկայով պաստառներ, «Քվեարկության կարգը» պաստառը, քվեաթերթիկների նմուշները, կուսակցությունների ընտրական ցուցակները, լրացուցիչ՝ մեծամասնական ընտրակարգով գրանցված թեկնածուների կենսագրականները: Հեռուստատեսությամբ մեկ շաբաթից ավելի անընդմեջ հեռարձակվում էր քվեարկության կարգի վերաբերյալ տեսահոլովակը, գործում էին կենտրոնական ընտրական հանձնաժողովի թարմացված էլեկտրոնային կայքը և ինտերնետային կապը: Ընտրությունների նախապատրաստության վերջին օրերի,

ընտրություններիօրը՝ քվեարկության ընթացքի, իսկ այնուհետև էլ՝ ընտրությունների արդյունքների լուսաբանման գործումանհրաժեշտ աշխատանք կատարեց կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ հասարակական հիմունքներովգործող մամլո կենտրոնը:

Անհրաժեշտ է նշել, որ ԼԴՀ Ազգային ժողովիընտրությունները մեծ հետաքրքրություն առաջացրին ինչպեսմեր հարևան երկրներում, այնպես էլ միջազգային հանրությունում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվեցին և ընտրությունների ընթացքին հետևելու առաքելություն ստանձնեցին22 տեղական և 124 միջազգային դիտորդներ Ռուսաստանի Դաշնությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Կանադայից, Արգենտինայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Չեխիայից, Դանիայից, Սլովակիայից, Հոլանդիայից, Իրանից, ԱՊՀ երկրներից, Հայաստանից, Աբխազիայից, Հարավային Օսիայից, Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետությունից: Ընտրությունների ընթացքը լուսաբանում էին տարբեր երկրների 70-ից ավելի լրագրողներ:

Դիտորդները և լրագրողները քվեարկության օրը հնարավորություն ունեցան հետևելուընտրությունների ընթացքին Ստեփանակերտի և շրջանների համարյա բոլոր ընտրատարածքներում, եղան շուրջ180 ընտրական տեղամասերում:

Դիտորդների և լրագրողների համընդհանուր համոզմամբ, որն արձանագրվել է կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված համապատասխան եզրակացություններում և լրատվության միջոցների բազմաթիվ հրապարակումներում, արցախյան խորհրդարանական ընտրություններն, ըստ էության, ընթացել են արդար, թափանցիկ և ժողովրդավարական, ինչն էլ մեր երկրում ժողովրդավարության համընդունելի նորմերի արմատավորման և զարգացման ճանապարհին առաջընթացի ևս մեկ քայլ է:

Մայիսի 23-ի խորհրդարանականընտրություններն աչքի ընկան ընտրողների մեծ ակտիվությամբ: Հակառակ նախընտրական շրջանի որոշակի մտավախության՝ մերընտրողները, ցուցաբերելով արցախցուն վայել քաղաքացիական հասունություն և բարձր կազմակերպվածություն, ակտիվորեն մասնակցեցին քվեարկությանը: Խորհրդարանական ընտրությունների քվեարկությանը մասնակցեց 66771 ընտրող, ինչը ընդամենը 200-ով է զիջում նախկին խորհրդարանական ընտրությունների ցուցանիշին:

Կցանկանայի մի քանի խոսքով անդրադառնալ Ազգային ժողովիընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում քաղաքացիներից դիմում-բողոքների ստացման և դրանց քննարկման արդյունքներին: Ընտրությունների նախապատրաստման առաջին փուլում կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներին քաղաքացիները, կուսակցությունները և թեկնածուները դիմում էին բանավոր, քանի որ բարձրացվող հարցերը հիմնականում կազմակերպական – տեխնիկական բնույթի էին, և ընտրական հանձնաժողովների գործուն միջամտությունից հետո դրանք լուծում էին ստանում, իսկ բացթողումները կամ թերացումները՝ վերացվում:

Մայիսի 22-ից մինչև մայիսի 25-ն ընկած ժամանակահատվածում ստացանք ընդամենը 5 գրավոր դիմում՝ 2-ը կենտրոնական ընտրական հանձնաժողովում, 1-ը՝ Ստեփանակերտի, 2-ը՝ Մարտակերտի տարածքային ընտրական հանձնաժողովներում: Դիմումներից 1-ը տեղամասում քվեարկության արդյունքները բողոքարկելու և վերահաշվարկի պահանջով էր, իսկմյուսները՝ անանուն տպագիր քարոզչական նյութեր տարածելու և քվեարկության կարգի խախտումների վերաբերյալ:

Կենտրոնական և վերոնշյալ տարածքային ընտրական հանձնաժողովները սահմանված կարգով և ժամկետներում քննարկել են այդ բողոքները, միջոցներ ձեռնարկել քվեարկության կարգի խախտման դեպքերը վերացնելու ուղղությամբ, մեկ ընտրական տեղամասում կատարել են քվեաթերթիկների վերահաշվարկ և արդյունքներով հավաստագրել, որ հաշվարկման ժամանակ երևան հանված չնչին անձշտությունները չեն ազդել ընտրությունների արդյունքների վրա տվյալ ընտրատարածքում:

Նշենք նաև, որ Ազգային ժողովի՝ համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերովոչ մեկը ԼԴՀ Գերագույն դատարան չի դիմել:

Ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած ու գրանցված չորս կուսակցությունները և 44 պատգամավորության թեկնածուները ընտրական գրավ են մուծել. կուսակցությունները՝ 500-հազարական, թեկնածուները՝ 100-հազարական դրամի չափով:

Համամասնական ընտրակարգով Ազգային ժողովում մանդատներ ստացած երեք կուսակցություններին, ինչպես նաև ընտրված պատգամավորներին և 5 տոկոսից ավելի կողմ ձայներ ստացած թեկնածուներին վերադարձվել է ընտրական գրավը, իսկ կայացած ընտրությունների արդյունքներով անհրաժեշտ ձայներ չստացած մեկ կուսակցության և 5 թեկնածուների ընտրական գրավները ընտրական օրենսգրքով սահմանված կարգով կփոխանցվեն պետական բյուջե:

Գրանցված 4 կուսակցությունները և 44 թեկնածուներից 37-ը հիմնել են նախընտրական հիմնադրամներ: Կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների ընդհանուր գումարը կազմել է 11018.0 հազար դրամ, իսկ ծախսերը՝ 10971.4 հազար դրամ: Թեկնածուների հիմնադրամներում մուտքերը կազմել են 6588.1 հազար դրամ, իսկ ծախսերը՝ 6512.4 հազար դրամ: Հիմնադրամներում մնացած միջոցները կազմել են 122.3 հազար դրամ, որը նույնպես ենթակա է փոխանցման պետական բյուջե, եթե սահմանված եռամսյա ժամկետում չօգտագործվեն բարեգործական նպատակներով:

Ներկայում կենտրոնական ընտրական հանձնաժողովը ուսումնասիրում է ԼՂՀ 5-րդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների կազմակերպման և անցկացման բոլոր մանրամասները, միջոցներ է մշակում նկատված թերություններն ու բացթողումները վերացնելու, ժողովրդավարության կարևորագույն ինստիտուտներից մեկը հանդիսացող ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործափորձը զարգացնելու, ընտրական գործընթացները կատարելագործելու և, անհրաժեշտության դեպքում, ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ մշակելու և Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու ուղղությամբ:

Շնորհակալություն:

**ԼՂՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ՝**

Ս. Նասիբյան

